

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ Կոտայքի մարզի «Զրառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի երրորդ օտար լեզվի՝ անգլերենի (2 դասաժամ) և ինֆորմատիկայի (5 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից (31.07.2019) մինչև 2019 թվականի օգոստոսի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10⁰⁰-ից 15⁰⁰-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2019 թվականի օգոստոսի 28-ին՝ ժամը 15⁰⁰ -ին, Կոտայքի մարզի «Զրառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Հասցեն՝ Կոտայքի մարզ, գյուղ Զրառատ:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (091)69-37-49 հեռախոսահամարով:

Տնօրեն՝

Ա.Բեգլարյան